այլեւս: Աւելի շուտ, այդ չէ մեայն: Գնում եմ նշանախօսի մօտ: Զգիտեմ՝ գեղեցի՞կ է, տը-գե՞ղ է: Կարեւոր չէ:

* * *

Ամէն մի մշակոյթ ունի իր գերագոյն ռիթմը, որով կարողանում է տիրել իր հոգեկան փոթորիկներին: Կեանքի թաւալումը, հակասական հոսանքների մղումի տակ, առաջ է բերում ներքնաշխարհի ծածուկ ընազդով օժտուած մի լարուածութիւն, որը ճակատագրականօրէն ձգտում է իր արտաքին հաւասարակշռութեան: Մեր էութիւնը հիմնուած է խորհուրդների կշռականութեան վրայ: Իսկական արժէքները անտեսանելի են, ծովերի մէջ գոյութիւն ունեցող հոսանքների նման: Ու ամէն ինչ հիմնուած է նրանց վրայ: Ամէն ինչ բխում է այնտեղից, եւ այդ՝ հակառակ մեր գիտակցութեան եւ այն արտաքին աշխարհին, ուր մենք կարծում ենք որ ապրում ենք:

Պատահում են ժամանակներ, երբ փոթորիկները, ներքին հոսանքները տակնուվրայ են անում: Կամուրջները փլչում են, նաւերը փըրկութեան սուլոցներ են արձակում եւ կոհակները բարձրանում են լեռների նման:

Այդպիսի ճգնաժամերին ամէն մի անհատ եւ ամէն մի ժողովուրդ՝ որպէսզի չընկղմի, չանհետանայ՝ դիմում է իր հանճարի գերագոյն ռիթմին: Ալիքը զսպում է, եւ իր գիտակցութեան մէջ փոթորիկը սահմանափակում է:

Այդ զսպանակը արեւմտեան երկիրների համար դասակարգութիւն է:

Պարսիկների ահարկու դրոհի դէմ Հելլադան պարզեց իր պղատոնեան ակադեմոսը: Սանձեց հելլենական հոգու կատաղած ձին, ալիքների վրայ ձէթ ածեց ու կեանքի վրայ ցոլացրեց իդէաների արեւային հմայքը: Բայց, ո՞վ չիմանում, որ Պղատոնի ամէն մի նախադասութեան տակ՝ չնայած Սոկրատեան սրած դանակին՝ ալեկոծում է Եելեւզիսեան խորհուրդների անհանգիստ ոգին: Այն ոգին, որը Ալեքսանդրեան շրջանում, Ֆիլոնի դպրոցի հետ, յորդում է անդուսպ գետի նման ու նոր իմացականութեան տակ հոգեէնութեան անտառներ հրդեհում:

Միջին դարերի ամբողջ շրջանը, եւրոպական մարդկութեան համար, քրիստոնէական ափրիկեան դպրոցի (Տերտուղիանոս) եւ Պղատոնի պայքարն է: Ենթագիտակցութեան մէջ երերող տիեզերքը եւ գոյացման բարձրագոյն ռիթմը, յայտնատեսութեան առջեւ կայծկլտող ապոկալիպսեան աշխարհը եւ Աւգուստինոսի տրամաբանական բարոյագիտութիւնը, ռօմանական ոճը եւ գոթականութիւնը, ոգին եւ արձանը, հակադէմ ուժեր են, որոնց վրայ դարերը պահում են իրենց հաւասարակշռութիւնը:

Դասականութիւնը խարխիս է, որ փոթորիկների ժամանակ արեւմտեան մշակոյթը նետում է ծով, նաւը փրկելու համար: Դժոխքը բոցավառում է Դանտէի միապաղաղ terzina-ների տակ եւ Մեդիչիները, գլխից զարնուած օձերի նման, պառկում են Միքայէլ Անջելոյի դամբարանների մէջ:

Իսկ մե՞նք:

Վայրի հաւուկ մի եմ, բռնած ու բերած
Դրած գիս ի նեղ ընդդան...

* * *

Կոմերիդմիութիւնը հայ ոգու աւագ սեղանի վրայ կաթլետ է տապակում եւ խորանում մարդանք անում:

Ցանուն ինչի՞:

Ու անցեալը, Հռիփսիմէի զանգակատան խարխուլ սանդուխի նման, իջնում է վար, դէպի վիհը:

Միտքս պրպտում է հեռաւոր աղբիւրների շուրջը, ուր մեր հոգին իր ծարաւն է յագեցրել: Քսան դար առաջ, անմատչելի լեռների վրայ, միլիոնների հեղկուած կածաններով, մենք առաջացել ենք մի պուտ ջուրի համար ու չորցած լեզուով զովութիւն որոնել: Ու չնայած դրան, մենք դեռ ծարաւ ենք մինչեւ այսօր, բայց այլեւս ոչ մի ուղղութիւն դէպի ոչ մի լեռ մեզ չի տանում:

Հայ ժողովուրդը չի ստեղծած եւ ոչ մի փիլիսոփայութիւն, որը հանդիսանար իր ներքին, հոգեկան կեանքի անհրաժեշտ իրականացումը: Հայ միտքը մեքենաբար կամ պարտադրաբարականօրէն ընդդրկած է գիտական կամ հասարակագիտական որոշ ուղղութիւններ՝ առանց մարմնացնելու այդ ուղղութիւնները: Հայ հոգին չէ կանգնած իր կենտրոնում, ըստեղծելու համար իր գոյացութեան ուրոյն եւ ինքնայատուկ ձեւը: Հայ ոգին առարկայական պայմանների պարտադրած դէպքերի պատմու-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան